

ATTENTION!

Parishioners and Friends of St. Gregory Church
may sponsor the weekly issue of the Sunday Bulletin.
For details, please contact
the parish office at 626-449-1523.

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու Ծխականներն ու
Բարեկամները կրնան հովանավորել
Եկեղեցու շաբաթական թերթիկը
Մանրամասնություններու համար հեռաձայնել
Եկեղեցու Գրասենյակը՝ 626-449-1523 թիւով

Office Hours: Tues. - Sat. 9:00 a.m.-4:00 p.m.
Եկեղեցու գրասենյակի ժամեր:
Գշ.- Շբ. 9:00 կ.ա.- 4:00 կ.ե.

St. Gregory Armenian Church Hall Rentals
Եկեղեցու «Կիրակոս» եւ «Եկատեան» Սրահները
Տրամադրելի են Ձեր Բոլոր Առիթներուն
Yegavian and Geragos Halls are available for your

- ❖ Weddings Հարսանիքներ
- ❖ Baptism Կնունքներ
- ❖ Birthdays Տարեդարձներ
- ❖ Anniversaries Հոգեճաշեր
- ❖ Hokejash and any other occasion Եւայլն

For more info, please call:

Vahe Charkhutian 562-715-8730.

Մանրամասնութեան Համար Հեռաձայնել՝
Վահէ Չարխըթեանին՝ 562-715-8730 թիւով



St. Gregory The Illuminator Armenian Apostolic Church

Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայց. Առաքելական Եկեղեցի

Sunday Bulletin

Հոգեւոր հովիւ՝
Տէր Սարգիս Ա. Քհնյ. Փետրոյեան

Կիրակի, 3 Փետրուար 2013
Սուրբ Պատարագ՝ կ.ա. ժամը 10:30ից
Քարոզ՝ կ.ա. ժամը 11:30ից

❖
Archpriest Fr. Sarkis Petoyan, Pastor

Sunday, February 3, 2013
Divine Liturgy 10:30 a.m.
Spiritual Message 11:30 a.m.

*Welcome to our visitors! Our Family of parishioners joyfully
invites you to make St. Gregory parish your spiritual home.
Please join us for fellowship in the Yegavian Hall following
services today!*

2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107 • Tel. 626-449-1523 • Fax: 626-449-7039
E-Mail: stgregoryarmenianchurch@yahoo.com • www.saintgregoryarmenianchurch.com

Յովհաննու Աւետարանէն (6:39-47)

Այս է Հօրս կամքը, որ զիս ղրկեց. այն ամէնը զոր Հայրը տուած է ինձի՝ անկէ ոչինչ կորսնցնեմ, այլ վերջին օրը յարութիւն տամ անոր: Այս է Հօրս կամքը. ով որ տեսնէ Որդին եւ հաւատ տայ անոր՝ յաիտենական կեանքը ունենայ. եւ ես վերջին օրը յարութիւն պիտի տամ անոր:

Հրեաները կը տրտնջէին անոր դէմ, որովհետեւ ըսած էր՝ ես եմ երկինքէն իջած հացը: Եւ կ'ըսէին. «Ասիկա Յիսուսը չէ՞, Յովսէփի որդին, որուն հայրն ու մայրը կը ճանչնանք մենք: Իսկ հիմա ինչպէ՞ս կ'ըսէ՝ ես երկինքէն իջայ»: Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոնց. «Մի՛ քրթմնջէք իրարու մէջ. ոչ ոք կրնայ գալ ինձի, եթէ զայն չքաշէ Հայրը, որ զիս ղրկեց. եւ ես վերջին օրը յարութիւն պիտի տամ անոր: Մարգարէներու գրքին մէջ գրուած է. «Եւ ամէնքը Աստուծմէ ուսած պիտի ըլլան»: Ամէն մարդ որ հօրմէն կը լսէ եւ կը սորվի՝ ինձի կու գայ: Սակայն ոչ ոք տեսած է Հայրը, եթէ ոչ ան՝ որ Աստուծմէ է. ան տեսած է Հայրը: Ըջմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ով որ հաւատայ՝ կ'ունենայ յաիտենական կեանքը:

John 6:39-47

And this is the will of him that sent me, that of all which he had given me I should lose nothing, but should raise it up at the last day.

For this is the will of my Father, that every one that behold the Son, and believe on him, should have eternal life; and I will raise him up at the last day.

The Jews therefore murmured concerning him, because he said, I am the bread which came down out of heaven.

And they said, Is not this Jesus, the son of Joseph, whose father and mother we know? how does he now say, I am come down out of heaven?

Jesus answered and said unto them, Murmur not among yourselves.

No man can come to me, except drawn by the Father that sent me and I will raise him up in the last day.

It is written in the prophets, And they shall all be taught of God. Every one that has heard from the Father, and had learned, come unto me.

Not that any man has seen the Father, save he that is from God, he had seen the Father.

Verily, verily, I say unto you, He that believes has eternal life.

St. Gregory Armenian Church Parish Directory

Parish Council	Richard Mushegain	909 578 48 65
Ladies Society	Joan Meymarian	626 794 6771
Men's Forum	Berj Gourdikian	626 355 87 80
Friendship Club	Isabel Kouyoumjian	626 446 60 58
A.C.Y.O Seniors	Armand Yerjanian	626-354-2909
Choir Director	Elise Tashjian	626 356-9208
Hovsepian School	Office	626 578 13 43
Hovsepian School	Shakeh Haroutiounian	818 437 0229
Saturday School	Norayr Dadouryan	626 683 72 11
Sunday School	Marguerite Hougasian	626 351 81 37

Upcoming Events

- Wed 2/6/2013. . . St. Gregory Friendship Club Luncheon 12:00p.m.
- Wed 2/20/2013. . St. Gregory Ladies Society Luncheon 12:00p.m.
- Thu 2/28/2013 . . St. Gregory Men's Forum Dinner 7:00p.m.
- Sun 6/2/2013 St. Gregory Name Day and Fr. Sarkis' 15th Anniversary
of Ordination to Holy Priesthood of Christ 12:30p.m.
- Fri. 06/21/2013 . St. Gregory Hovsepian School Graduation 6:00p.m.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ

Հոգեհանգստեան խնդրանքները հաճեցէք ներկայացնել մինչեւ Հինգշաբթի Կէսօր, որպէսզի կարելի ըլլայ յիշել թերթիկին մէջ:


REQUIEM SERVICE (HOKEHANKISD)

We ask those who wish to have hokehankisd conducted for their loved ones on a given Sunday, to please submit their names by Thursday noon for printing in the Sunday Bulletin.

**St. Gregory Armenian Church
Ladies Society**

Invites you to a
SPECIAL VALENTINE'S LUNCHEON

Wednesday, February 20, 2013
12:00 Noon - Yegavian Hall



Sponsored by
**Marguerite & Virginia Hougasian in memory of
their Mother Victoria Hougasian
& Aida Sethian in honor of
her Mother Anahid Moukhalian**

Program : A Valentines Card
With songs by **Stu Henderson**, baritone
Program Sponsored by **Marguerite Hougasian**

Donation \$15 R.S.V.P. a must.
Jeannette Kevorkian (818) 244-7222
Ivy Grashian (626) 446-1796
Please pay your dues \$20

**Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցի
Տիկնանց Միութեան
Ամսական ճաշ**

Չորեքշաբթի, Փետրուար 20, 2013 ժամը 12:00-ին
**Նուիրուած՝ Մարկրիթ Եւ Վրժինիա Ղուկասեաններու
կողմէ ի յիշատակ իրենց Մօր՝ Վիքի Ղուկասեանի
Նաեւ Այտա Սէրեանի կողմէ ի Պատիւ իր Մօր՝
Անահիտ Մուխալեանի
Մուտքի Նուէր \$15
Հաճեցէք վճարել ձեր անդամատուրքը \$20**

Second Timothy 2, 15-26

Do your best to present yourself to God as one approved by him, a worker who has no need to be ashamed, rightly explaining the word of truth. Avoid profane chatter, for it will lead people into more and more impiety, and their talk will spread like gangrene. Among them are Hymenaeus and Philetus, who have swerved from the truth by claiming that the resurrection has already taken place. They are upsetting the faith of some. But God's firm foundation stands, bearing this inscription: "The Lord knows those who are his," and, "let everyone who calls on the name of the Lord turn away from wickedness."

In a large house there are utensils not only of gold and silver but also of wood and clay, some for special use, some for ordinary. All who cleanse themselves of the things I have mentioned will become special utensils, dedicated and useful to the owner of the house, ready for every good work.

Shun youthful passions and pursue righteousness, faith, love, and peace, along with those who call on the Lord from a pure heart. Have nothing to do with stupid and senseless controversies; you know that they breed quarrels. And the Lord's servant must not be quarrelsome but kindly to everyone, an apt teacher, patient, correcting opponents with gentleness. God may perhaps grant, that they will repent and come to know the truth, and that they may escape from the snare of the devil, having been held captive by him to do his will.

FELLOWSHIP HOUR

Families and individuals are encouraged to host the fellowship hour for happy or otherwise solemn occasions. Please contact church office.

**Today's Fellowship Hour is sponsored by
Evelyn Jandegian & Sue Taktakian**

(Բ. Տիմ.) 2, 15-26

Ջանա՛ Աստուծոյ առջեւ քու անձդ ներկայացնել փորձուած, մշակ առանց ամօթի, ճշմարտութեան խօսքը ուղիղ բացատրող: Բայց հեռո՛ւ կեցիր պիղծ եւ սնոտի խօսքերէ, քանի որ ատոնց անձնատուր եղողները անելի ու անելի առաջ կ'երթան ամբարշտութիւններու մէջ. եւ անոնց խօսքերը քաղցկեղի նման ճարակ կը գտնեն: Անոնցմէ են Հիմեոս եւ Փիղետոս, որոնք շեղեցան ճշմարտութենէն եւ կ'ըսեն թէ մեռելներու Յարութիւնը արդէն իսկ եղած է. եւ անոնք կը կործանեն ոմանց հաւատքը: Բայց կանգուն կը մնայ Աստուծոյ հաստատուն հիմը եւ ունի այս կնիքը. «Տէրը ճանչցաւ զանոնք՝ որ իրն են». նաեւ՝ «Թող անիրաւութենէ հեռու ըլլայ ամէն ոք՝ որ կու տայ Տիրոջ անունը»: Մեծ տան մը մէջ ոչ միայն ոսկեղէն եւ արծաթեղէն անօթներ կ'ըլլան, այլ նաեւ փայտեղէն եւ խեցեղէն անօթներ: Կան այնպիսի անօթներ՝ որոնք պատուաւոր գործածութեան համար են. կան ալ՝ որ ոչ պատուաւոր գործածութեան համար են: Եթէ մէկը մաքուր պահէ ինքզինք այդպիսի բաներէ՝ պիտի ըլլայ պատուական անօթ մը, սրբագործուած եւ պիտանի իր Տիրոջ, պատրաստուած ամէն բարի գործերու համար: Երիտասարդական ցանկութիւններէն փախի՛ր ու զճա՛ արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան, սրբութեան ետեւէն անոնց հետ՝ որոնք կ'ոգեն Տիրոջ անունը մաքուր սրտով: Բայց յիմար եւ անմիտ խնդիրներէ խուսափէ՛. գիտցիր որ կոիւներ կը ծնին անոնցմէ: Այսպէս ուրեմն, Տիրոջ ծառան պէտք չէ որ կոիւ ընէ, այլ ամենուն հանդէպ պարտի ըլլալ հեզահամբոյր, ուսանող, անոխակալ, հանդարտութեամբ խրատելու համար հակառակողները, որ Աստուած թերեւս ապաշխարութիւն տայ անոնց, որպէսզի հասնին ճշմարտութեան գիտութեան, եւ Սատանային որոգայթներէն ազատին անոնք՝ որ որսացուած են անկէ իր կամքը կատարելու համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրուի անջատել ձեր բջիջային հեռախօսները եկեղեցի մտնելէն առաջ:

ATTENTION

Please turn off your cell phone when entering the church.

**Երգչախումբը պէտք ունի նոր երգողներու
Հետաքրքրուողները հաճին դիմել
Էլիզ Թաշճեանի՝ Երգչախումբի ղեկավարին
The Choir needs new singers
If you are interested please see Elise
Tashjian, the Choir Director**

Կարեւոր Ծանուցում

Կը խնդրենք մեր հաւատացեալներէն մնալ եկեղեցի Կիրակի օրուան պաշտամունքի ընթացքին մինչեւ վերջ ի յարգանք այն ընտանիքներուն, որ հոգեհանգստեան պաշտօն խնդրած են: Հոգեհանգիստը միայն խնդրողներուն համար չէ, այլ մեր բոլոր ննջեցեալներուն համար է: Հաճեցէք եկեղեցի մնալ մինչեւ վերջ, ստանալու համար արձակման օրհնութիւնը, համբուրելով Սբ. Աւետարանը:

Հոգեւոր Հովիւ

AVAILABLE FOR SPONSORSHIP

If you would enjoy the opportunity of investing in the growth of our parish, please consider sponsoring one of the following items, either in your name or in memory of your loved one:

- ¼ of Pew #42\$1,000
- Stained Glass Window in the Sanctuary\$10,000
- Stained Glass Window near steps to Balcony\$5,000
- Small Chandelier\$5,000
- Narthex Doors (main/ inside)\$15,000
- One of Two New Side Altarst.b.d.
- Elevator\$25,000
- Bell Tower Mural\$100,000



St. Gregory Sunday School Classes



11:00a.m.- 12:30p.m. Dunaians Hall

You may register your 4-15 year old students

There is no charge to attend classes

Students are taught the sharagans and prayers of the Armenian Church along with Bible verses and appropriate Biblical songs

*Train up a child in the way he should go
And when he is old, he will not depart from it*

Proverbs 22:6

Registration in person or call:

Church Office (626) 449-1523

Marguerite Hougasian (626) 351-8137

Աբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարան

Դասաւանդութիւնները՝ ամէն Կիրակի
առաւօտեան ժամը 11-էն 12:30
Տունայեան Արահին մէջ

Կրնաք արձանագրել ձեր 4-15 տարեկան երեխաները

Դասընթացքը անվճար է

Աշակերտները կը սորուին Ծարականներ, Հայկական
Եկեղեցւոյ Աղօթքներ եւ Աբ. Գրիգէն հատուածներ ու երգեր

*Կրթէ՛ մանուկը իր ճամբան սկսած ատենը,
որպէս զի իր ծերութեան ատենն ալ անկէ չխտորի*

Առակաց 22:6

ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

Հայ Եկեղեցւոյ մէջ ուշագրաւ եւ իրայատուկ նշանակութիւն ունեցող սօն մըն է Սրբոց Ղեւոնդեանցը, որ ամէն տարի կը նշուի Վարդանանց սօնը կանխող Երեքշաբթին:

Հաւաքական այս անունը, Ղեւոնդեանք՝ խորհրդանշան է բազմաթիւ արժանատրներու, որոնք իրենց կեանքը զոհած են յանուն կրօնի եւ ազգութեան:

Անոնք անձնուրաց կրօնատրներ են, որոնք ոչ միայն եղած են հակաբռնութեանց քարոզիչներ, այլեւ առաջապահ եւ օրինակելի մարտիկներ թէ՛ Վարդանանց պատերազմին, թէ՛ զայն կանխող, թէ՛ այնուհետեւ շարունակուող ժողովրդային ընդդիմութեանց գործնական քայլերու մէջ: Գրեթէ բոլորը նոյն ժամանակաշրջանին, Ե. դարու առաջին կիսուն ապրած դէմքեր են, եւ իրենց կրօնական ու հայրենաճուր ուսումն ու կրթութիւնը առած են Հայ ժողովուրդին գրաւոր դպրութեան առաջին եւ մեծագոյն ուսուցիչներուն՝ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպ մաշտոցի շունչի տակ, կամ անոնց ներշնչումով:

Ղեւոնդեանց սուրբերու ցուցաբերած կրօնական ամուր հաւատքը, ժողովուրդին հետ անոնց ունեցած անկեղծ գործակցութիւնը, Վարդանանց պատերազմի առաջին գիծերուն վրայ կոտորները իրենց կենդանի օրինակով խաշով առաջնորդելն ու սուրով պատերազմիլը, իրենց անսահման նուիրածութիւնը, ընդհանուր կերպով հիմնական տուեալներ են որով անոնք նուիրագործուած եւ որակաւորուած են տիպար եկեղեցականութեան յատկանիշերով: Կեանք եւ առաքինութիւններ, որոնց համար ամէն տարի հայահոծ գաղութներու մէջ հայ եկեղեցականներ կը մէկտեղուին, պատարագ կը մատուցանեն եւ վերանորոգ ուխտի հոգեւոր խորհրդածութիւններու նիւթ կը դարձնեն: Հայ Եկեղեցւոյ համար, անոնք կը նկատուին անխորտակ հաւատքի, ամբողջական նուիրումի պատմակրօնական տիպարներ:

Վարդանանց օրինակով սակայն, Ղեւոնդեանք խորերդանիշ անունը եւս, առնուած է բազմաթիւ արժանատրներու մէջէն մէկուն, Ղեւոնդ Երեցի անունով, պարզ ու յստակ այն միակ պատճառով, որ ան եղած է ամենէն յախուռն ու քաջ տիպարը, փայլուն միտքը, որուն մասին պատմիչներ հիացումով եւ համեմատաբար աւելի լայն կերպով անդրադարձած են:

The St. Leondius (Ghevondian) Saints

In the Armenian Church the Feast of the Ghevondian Saints has an appealing and unique meaning. The feast is celebrated each year on the Tuesday preceding the Feast of the Vardanians.

This collective name for the feast, Ghevondian Saints, reflects the idea of the sacrifice made by a multitude of worthy heroes in giving their lives in the name of their faith and nation.

These brave men were self-denying churchmen who were not only preachers against tyranny, but also fighters in the front lines in the War of the Vardanians, both before the battle itself and in the continuing popular resistance during the subsequent period.

Virtually all of them were in a contemporary group, who lived in the first half of the fifth century, and who obtained their religious and patriotic teachings under the greatest teachers of the first and greatest era of Armenian Literary scholarship, St. Sahak and St. Mesrop Mashtots, or through inspiration from them.

The firm religious faith of the Ghevondian Saints, their genuine cooperation with the people, the living example they became in fighting in the front lines of the Vardanian War with cross in hand while wielding the sword and their total commitment to the consecrated cause were the facts and the evidence of their character as ideal churchmen. These are the qualities of life and virtue that lead Armenian churchmen in cities where there are large Armenian populations to come together each year, celebrate the Divine Liturgy, and make these ideas the subject matter for reflection and renewed vows. These qualities are regarded in the Armenian Church as the epitome of indestructible faith and total dedication.

In the same manner as with the use of the name Vardanian, the term Ghevondians is taken to mean the many, but it is based on the name of one of them, Ghevond Yerets (Leondius the Cleric). He became the eponym because of his dauntless trait and his brilliant mind regarding which writers and historians have written with awe and esteem, and at length.

Սբ. Գրիգոր Լուսավորիչ Հայց. Եկեղեցույ Փաստիճայի

Մարդկանց Ասուլիսի Յանձնախումբ
(Տիկիճներուն Եւ Ընտանիքներուն Մասնակցութիւնը Միշտ Յանկալի Է)

Ամսական Ընթրիքի Հաւարոյթ

Հինգշաբթի Փետրուար 28, 2013 ժամը 7:00-ին



Բանախօս՝
Գրիսթիճա Մարտիրոսեան

Masters Degree in Clinical Psychology
from Pepperdine Univ.
Licensed Marriage and Family Therapist.
Specialist in Trauma Therapy,
Anger/Anxiety Management and
Family Communication

Նիւթ՝

Cristina will be discussing insights which will help everyone in the field of Anger and Anxiety Management and Family Communication as well as touch on some very other serious components in today's stressful society. These are critical topics that have a bearing on all of us! Must hear!

Սբ. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցույ
Եկատեան Սրահին Մէջ
2215 E Colorado Blvd., Pasadena, CA 91107

Ընթրիքի Նուէր՝ \$15

Տեղեր ապահովելու համար հեռաձայնել՝
Պրն. Խաժակ Գոնիալեանի: 626-351-0216
Պրն. Արտաշ Կուրտիքեանի: 626-399-1914
Եկեղեցույ գրասենեակ «Վերային»: 626-449-1523
Կը խնդրենք որ քաջալերեք մեզ հովանաւոր ըլլալով:

St. Gregory the Illuminator
Armenian Apostolic Church of Pasadena

Men's Forum

(Ladies & Families Always Welcome)

Monthly Dinner Meeting

Thursday, February 28, 2013 - 7:00p.m.



Guest Speaker
Cristina Mardirossian

Masters Degree in Clinical Psychology from
Pepperdine Univ. Licensed Marriage and
Family Therapist. Specialist in
Trauma Therapy, Anger/Anxiety
Management and Family Communication

Topic

Cristina will be discussing insights which will help everyone in
the field of Anger and Anxiety Management and Family
Communication as well as touch on some very other serious
components in today's stressful society. These are critical topics
that have a bearing on all of us! Must hear!

At

St. Gregory the Illuminator Armenian Apostolic Church -
Yegavian Hall

2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107

Donation \$15

RSVP'S Are A Must As Dinner Will Be Served

R.S.V.P. Mr. Khajag Konialian: 626-351-0216

Mr. Art Gourdikian: 626-399-1914

Church Office (Vera): 626-449-1523

Please become a sponsor. Call us for details.

Archpriest Fr. Sarkis Petoyan and
the Parish Council of
St. Gregory Armenian Church

Prayerfully Invite you to Attend
All Six Lenten Husgoom Prayer Vigils

Wednesday, February 13 7:00 p.m.

Wednesday, February 20 7:00 p.m.

Wednesday, February 27 7:00 p.m.

Wednesday, March 6, 7:00 p.m.

Followed by Special Michink Dinner

Wednesday, March 13 7:00 p.m.

Wednesday, March 20 7:00 p.m.

*All services will be conducted in Armenian and English,
using our state-of-the-art user-friendly service books for what
will be an enriching and spiritually-rewarding experience.
You are encouraged to remain for a fellowship supper in the
Yegavian Hall.*

*Տէր Սարգիս Աւագ Քհնյն. Փետրոյեան եւ Մր. Գրիգոր
Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Անդամները
միասնաբար կը հրաւիրեն ձեզ ներկայ գտնուելու Հսկումի
բոլոր արարողութիւններուն*

Չորեքշաբթի, Փետրուար 13, 2013 Երեկոյեան ժամը 7ին

Չորեքշաբթի, Փետրուար 20, 2013 Երեկոյեան ժամը 7ին

Չորեքշաբթի, Փետրուար 27, 2013 Երեկոյեան ժամը 7ին

Չորեքշաբթի, Մարտ 6, 2013 Երեկոյեան ժամը 6:30ին եւ

Միջինքի ընթրիք անմիջապէս ետք

Չորեքշաբթի, Մարտ 13, 2013 Երեկոյեան ժամը 7ին

Չորեքշաբթի, Մարտ 20, 2013 Երեկոյեան ժամը 7ին

Բոլոր արարողութիւնները պիտի ըլլան Հայերէն եւ

Անգլերէն լեզուներով հետեւելով Հսկումի արդիական եւ

հոգեպարար նոր ժամագիրքին:

Հսկումէն վերջ բոլորը հրաւիրուած էք աւանդական դարձած
պահոց համեմ ընթրիքին Եկաւեան սրահին մէջ:

Remember The Church In Your Will

SUPPORT ST. GREGORY ARMENIAN CHURCH VIA PURCHASING STONES

Your kind and generous donation of \$200 per stone will benefit St. Gregory Armenian Church immensely. Feel free to consult parish council members about purchasing stones.

Important Notice

We kindly request that during services, the faithful remain in church following Holy Communion, as a sign of respect for the families who have requested requiem service for their loved ones. Additionally, we ask that following the final blessing, we all honor the tradition of approaching and reverently kissing the Holy Bible.

ANNOUNCEMENTS

The Pastor is available to visit our parishioners in the hospital, nursing homes or conduct Home Blessings, and other sacramental needs and consultations. Please call the church office at 626-449-1523. We would like to increase our outreach to church members who are unable to attend services. Any parishioner who has a concern is welcome to call the pastor or the parish council.

Փաստահանայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք. Եկեղեցույ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Շաբաթ Օրերը ժամը՝ 10:00 - 1:00

ST. GREGORY SATURDAY SCHOOL EVERY SATURDAY

10:00 A.M. 1:00 P.M.

Children & Adults are welcome to learn
Armenian Language, History, Music and Culture

Մեծ Պահոց Ծրջանի Հսկումներ Եւ Սիրոյ Ծառ

Մեծ Պահոց շրջանին ամէն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին եկեղեցույս մէջ տեղի պիտի ունենայ հսկման արարողութիւն: Արարողութիւնէն ետք աւանդական դառնած պահոց համեղ ընթրիքը պիտի սպասարկուի Եկատեան սրահին մէջ: Նուիրատուութիւններ կարելի է կատարել Տիկ. Ժանէթ Գեորգեանի, Տիկ. Վարդուհի Եաղլընեանի եւ Տիկ Ծօն Մէլմէրիանի միջոցաւ:

Vesper services (Husgoom)

As of Wednesday February 13, 2013 will be held in the church sanctuary every Wednesday at 7:00 PM, and will be followed by Lenten supper (Siro-Jash) at Yegavian Hall: To sponsor or for donations please contact Mrs Vartouhi Yaglegian, Mrs Jeannette Kevorkian or Mrs Joan Meymarian